ՀՏԴ 796.332 DOI: 10.53068/25792997-2025.2.15-157

# ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ ՀԱՐՁԱԿՎՈՂՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՏԱԿ-ՏԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

*Վ. Մ. Շմավոնյան,*

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Հարձակվող, տեխնիկա, տակտիկա, գործողություն, խաղակես, արդյունք, արդյունավետություն, ոոպե:

**Հետազոտության արդիականություն:** Ֆուտբոլի ավելի քան հարյուրամյա պատմությունը հարձակման և պաշտպանության անվերջանալի հակամարտություն է: Հարձակումը՝ առավել ակտիվ, որոնող կողմ է: Այն հարձակման հզորության ամրապնդման փնտրտուքի համար մշտապես նոր քայլեր է ձեռնարկում:

Ուստի, համաշխարհային ֆուտբոլում մասնագետները նոր ուղիներ և միջոցներ են մշակում՝ միտված հարձակվողական գործողությունների դրական ավարտին:

Ֆուտբոլը հնարավորություն է տալիս երևակայելու, մշակելու նոր խաղաոճ, ներդնելու տեխնիկատակտիկական նոր մտահաղացումներ: Ահա այդ է պատճառը, որ առավել քան անհրաժեշտ ենք համարել մանրամասն ուսումնասիրել արդեն հայտնի տեխնիկատակտիկական գործողությունները, այս դեպքում հարձակվողների առումով՝ առավելագույն արդյունք ապահովելու համար:

Հետազոտության տվյալները կօգնեն մարզիչներին վեր հանել առկա խնդիրները՝ մարզման գործընթացում դրանք շտկելու և կատարելագործելու համար:

Դարպասին ուղղված յուրաքանչյուր հարվածից հետո հարձակվողը պետք է զբաղեցնի այնպիսի դիրք, որ հետ մղվելու դեպքում առաջինը տիրի գնդակին: Նա չունի կոնկրետ պաշտպանական պարտականություններ, սակայն իր ակտիվ խաղով կարող է մի քանի պաշտպանի ուշադրություն գրավել, թույլ չտալ նրանց մասնակցել սեփական թիմի հարձակմանը [1]:

Հարձակվողի խաղը տարբերվում է ճկուն մտածելակերպով, ժամանակի սուղ ընտրությամբ: Այդ պատճառով նա պետք է կարճ ժամանակահատվածում տարբեր հնարքների կիրառմամբ հասնի գործողությունների արդյունավետ ավարտին [2]:

Կենտրոնական հարձակվողի խաղը դարձել է ավելի բազմազան, բարդ և հետաքրքիր: Ազատվելով մըրցակցի հսկումից՝ նրանք խաղում են դաշտի կենտրոնում և եզրերում, ստեղծելով հարձակման թվային առավելություն ի հաշիվ ավել խաղացողի [3]:

Հարձակվողների տեխնիկական զինանոցը պետք է լինի բազմազան, իսկ հնարքների կատարման որակը՝ բարձր: Հատկապես բարձր են պահանջները անհրաժեշտ հարձակվողի համար հիմնական տեխնիկական էլեմենտների՝ ոտքով և գլխով հարվածների առումով, մրցակիցների դարպասը գրավելու համար [4]:

Տակտիկական մտածողությունը ձևավորվում է՝ ձեռք բերված գիտելիքների օգտագործման, փորձի, հետևողականության, իրավիճակը արագ ընկալելու և գնահատելու, ժամանակին ճիշտ որոշումներ կայացնելու հիման վրա [5]:

Իր զարգացման ողջ ընթացքում ֆուտբոլը փոխվել է դեպի տեխնիկատակտիկական գործողությունների կատարման ինտենսիվության բարձրացման, տարբեր տակտիկական համակարգերի սահմաններում ֆուտբոլիստների ունիվերսալիզացիայի [6]:

Ֆուտբոլում մրցակցական գուծունեության վերլուծությունը արդիական պրոբլեմ է և թույլ է տալիս անմիջապես մրցակցական գործընթացում ոչ միայն բարձրացնել ղեկավարման ազդեցությունը, այլև կարգավորել մարզումային գործընթացը՝ կախված ժամանակակից ֆուտբոլի զարգացման տենդենցներից [7]:

Ժամանակակից ֆուտբոլի տեխնիկան էական փոփոխություններ է կրել: Դրա հիմնական տարբերությունը կայանում է՝ կատարման պարզության, առավել ռացիոնալիզմի և կատարելագործման մեջ [8]:

Տիրելով գնդակին ֆուտբոլիստը լուծում է ամենատարբեր շարժողական խնդիրներ: Կասեցնում և փոխանցում է գնդակը, կատարում է հարվածներ դարպասին, իրագործում է վարումներ և խաբկեր, տուգանային, ազատ հարվածներ և այլն [9]:

Հարձակվողը բարձր տեխնիկայի շնորհիվ, առավել պարզ միջոցներով, լուծում է ամենաբարդ խնդիրները, տիրապետում է եզրափակիչ հզոր հարվածների և կարող է գլխով խաղալ ցանկացած իրավիճակում՝ հատկապես ձըգտելով գլխով խաղում գնդակի համար պայքարում գերազանցել մրցակցին [10]:

**Հետազոտության նպատակը, խնդիրները:** Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել բարձրակարգ հարձակվողների տեխնիկատակտիկական գործողությունները մրցակցական հանդիպումների ընթացքում:

**Հետազոտության խնդիրը:** Ուսումնասիրել հարձակվողների կատարած տեխնիկատակտիկական գործողությունները, բացահայտել արդյունավետ և ոչ արդյունավետ գործողությունները մրցակցական հանդիպումների ընթացքում:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Հետազոտության մեթոդներն են՝ սկզբնաղբյուրների ուսումնասիրություն, մանկավարժական դիտումներ, մաթեմատիկական վիճակագրություն:

Մանկավարժական դիտումների համար մշակվել է դիտման քարտ՝ ընդգրկելով տեխնիկատակտիկական գործողությունները՝ ըստ խաղակեսերի տարբեր ժամանակահատվածների: Վանդակում նշվել է ընդհանուր գործողությունների գումարը, համարիչի թիվը ցույց է տալիս ճիշտ գործողությունը, հայտարարի սխալ:

Մեր կողմից ուսումնասիրվել է 2024-2025 թթ. խաղաշրջանի հարձակվողների տեխնիկատակտիկական գործողությունները (ՏՏԳ) 24 պաշտոնական հանդիպումների անմիջական դիտման ընթացքում, դրանք են՝ Հ. Քեյնը՝ Մյունխենի «Բավարիա», Լ. Մարտինեսը՝ Միլանի «Ինտեր», Է. Հոլանդը՝ «Մանչեսթեր Սիթի», Ա. Մորատան՝ «Միլան», Ռ.Լևանդովսկին՝ «Բարսելոնա» և Կ.Մբապեն՝ Մադրիդի «Ռեալ»:

Որպեսզի ֆուտբոլիստի տեխնիկատակտիկական գործողությունների պատկերն ավելի պարզ լինի, առանձնացրել ենք յուրաքանչյուրի ՏՏԳ-ի միջին ցուցանիշները 15 րոպե կտրվածքով և համեմատել ենք յուրաքանչյուր 15 րոպեի ՏՏԳ-ն:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Մեր կողմից ընտրված ֆուտբոլիստներից իր լավագույն կողմերով առանձնանում է «Բավարիայի» խաղացող Հարի Քեյնը: Նա շատ ակտիվ է առաջին խաղակեսում, հատկապես 15-30 րոպեներին (աղյուսակ 2): Նա խաղը սկսում է ՏՏԳ-ի 88% արդյունավետությամբ, իսկ վերը նշված րոպեներին այն հասնում է 95%: Նույն արդյունքն են ցույց տալիս Մբապեն և Հոլանդը: Առաջին խաղը սկսում է 75,5% արդյունավետությամբ և հասնում է 83%-ի, իսկ երկրորդը սկսում է 64,5-ով և հասցնում 90-ի: Մարտինեսն սկսում է 69%-ով, իսկ ամենաբարձր տոկոսը՝ 87, ցույց է տալիս առաջին կեսին վերջին 15 րոպեներին: Բացի Հոլանդից մնացած երեքը աչքի են ընկնում նաև բարձր ՏՏԳ-ի ընդհանուր քանակով, Քեյնը՝ 207, Մբապեն՝ 129, Մարտինեսն՝ 115:

Աղյուսակ 1

***Լավագույն հարձակվողների ՏՏԳ-ը պաշտոնական հանդիպումներում***

| Խաղա-ցորներ | Փոխանցումներ | | | Վարում | Գլխով խաղ | Գնդակի խլում | Խաղակներ | Խաղից դուրս | Հարված դարպասին | ՏՏԳ ընդհանուր քանակը | Արդյունավետություն % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 0-15րոպե | Կարճ | միջին | երկար | | | | | | | | |
| Քեյն | $7\frac{7}{0}$ | $18\frac{16}{2}$ | $3\frac{2}{1}$ | $12\frac{11}{1}$ | $2\frac{2}{0}$ | - | $12\frac{9}{3}$ | - | $4\frac{4}{0}$ | $58\frac{51}{7}$ | 88 |
| Մո-ռա-տա | $10\frac{10}{0}$ | $8\frac{8}{0}$ | $2\frac{1}{1}$ | $8\frac{6}{2}$ | - | $1\frac{1}{0}$ | $4\frac{2}{2}$ | $1\frac{0}{1}$ | - | $34\frac{28}{6}$ | 82 |
| Մբա-պե | $7\frac{6}{1}$ | $13\frac{8}{5}$ | - | $15\frac{14}{1}$ | $2\frac{2}{0}$ | - | $11\frac{6}{5}$ | - | $1\frac{1}{0}$ | $49\frac{37}{12}$ | 75.5 |
| Լևան-դովս-կի | $4\frac{4}{0}$ | $5\frac{4}{1}$ | $2\frac{0}{2}$ | $4\frac{4}{0}$ | - | - | $6\frac{4}{2}$ | $1\frac{0}{1}$ | $4\frac{4}{0}$ | $26\frac{20}{6}$ | 77 |
| Հո-լանդ | - | $7\frac{4}{3}$ | $2\frac{2}{0}$ | $11\frac{8}{3}$ | $1\frac{1}{0}$ | - | $4\frac{1}{3}$ | $2\frac{0}{2}$ | $4\frac{4}{0}$ | $31\frac{20}{11}$ | 64.5 |
| Մար-տի-նես | $6\frac{5}{1}$ | $8\frac{7}{1}$ | $1\frac{0}{1}$ | $7\frac{5}{2}$ | $3\frac{3}{0}$ | - | $6\frac{4}{2}$ | $4\frac{0}{4}$ | $1\frac{1}{0}$ | $36\frac{25}{11}$ | 69 |

**Աղյուսակ 2**

***Լավագույն հարձակվողների ՏՏԳ-ը պաշտոնական հանդիպումներում***

| Խաղա-ցողներ | Փոխանցումներ | | | Վարում | Գլխով խաղ | Գնդակի խլում | Խաբկեր | Խաղից դուրս | Հարված դարպասին | ՏՏԳ ընդհանուր քանակը | Արդյունավետություն % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15-30ոպե | կարճ | միջին | երկար | | | | | | | | |
| Քեյն | $13\frac{12}{1}$ | $18\frac{17}{1}$ | $4\frac{4}{0}$ | $9\frac{9}{0}$ | $1\frac{1}{0}$ | $2\frac{2}{0}$ | $14\frac{13}{1}$ | - | $3\frac{3}{0}$ | $64\frac{61}{3}$ | 95 |
| Մո-ռա-տա | $5\frac{4}{1}$ | $7\frac{5}{2}$ | $4\frac{3}{1}$ | $5\frac{3}{2}$ | $1\frac{1}{0}$ | - | $5\frac{4}{1}$ | $1\frac{0}{1}$ | $1\frac{1}{0}$ | $29\frac{21}{8}$ | 72 |
| Մբա-պե | $9\frac{8}{1}$ | $10\frac{9}{1}$ | - | $8\frac{7}{1}$ | $2\frac{2}{0}$ | - | $9\frac{6}{3}$ | $1\frac{0}{1}$ | 2 | $41\frac{34}{7}$ | 83 |
| Լևան-դովս-կի | $3\frac{2}{1}$ | $8\frac{8}{0}$ | $2\frac{0}{2}$ | $8\frac{8}{0}$ | $1\frac{1}{0}$ | $1\frac{1}{0}$ | $5\frac{4}{1}$ | - | $1\frac{1}{0}$ | $28\frac{24}{4}$ | 86 |
| Հո-լանդ | $3\frac{3}{0}$ | $4\frac{4}{0}$ | $1\frac{1}{0}$ | $7\frac{5}{2}$ | $6\frac{6}{0}$ | $1\frac{1}{0}$ | $6\frac{5}{1}$ | - | $1\frac{1}{0}$ | $29\frac{26}{3}$ | 90 |
| Մար-տի-նես | $8\frac{6}{2}$ | $5\frac{5}{0}$ | $2\frac{1}{1}$ | $9\frac{6}{3}$ | $3\frac{3}{0}$ | - | $3\frac{3}{0}$ | $3\frac{0}{3}$ | $3\frac{3}{0}$ | $36\frac{27}{9}$ | 75 |

**Աղյուսակ 3**

***Լավագույն հարձակվողների ՏՏԳ-ը պաշտոնական հանդիպումներում***

| Խաղա-ցորներ | Փոխանցումներ | | | Վարում | Գլխով հարվածներ | Գնդակի խլում | Խաղեր | Խաղից դուրս | Հարվածներ դարպասին | ՏՏԳ ընդհանուր վիճակը | Արդյունավետություն % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 60-75-րոպե | կարճ | միջին | երկար | | | | | | | | |
| Քեյն | $16\frac{16}{0}$ | $14\frac{13}{1}$ | $6\frac{5}{1}$ | $14\frac{12}{2}$ | - | - | $11\frac{10}{1}$ | - | $1\frac{1}{0}$ | $62\frac{57}{5}$ | 92 |
| Մորա-տա | $1\frac{1}{0}$ | $5\frac{3}{2}$ | $2\frac{1}{1}$ | $3\frac{1}{2}$ | - | - | $3\frac{1}{2}$ | $1\frac{0}{1}$ | $1\frac{1}{0}$ | $16\frac{8}{8}$ | 50 |
| Մբա-պե | $7\frac{6}{1}$ | $7\frac{5}{2}$ | $2\frac{2}{0}$ | $10\frac{8}{2}$ | - | - | $11\frac{8}{3}$ | - | $1\frac{1}{0}$ | $38\frac{30}{8}$ | 79 |
| Լևան-դովս-կի | - | $11\frac{9}{2}$ | $2\frac{0}{2}$ | $8\frac{7}{1}$ | $1\frac{1}{0}$ | - | $6\frac{6}{0}$ | - | $3\frac{3}{0}$ | $31\frac{26}{5}$ | 84 |
| Հո-լանդ | $1\frac{1}{0}$ | - | $1\frac{0}{1}$ | $4\frac{2}{2}$ | $3\frac{3}{0}$ | $1\frac{1}{0}$ | $5\frac{3}{2}$ | - | $1\frac{1}{0}$ | $16\frac{11}{5}$ | 69 |
| Մար-տինես | $3\frac{1}{2}$ | $9\frac{6}{3}$ | $3\frac{2}{1}$ | $5\frac{5}{0}$ | $4\frac{4}{0}$ | - | $5\frac{4}{1}$ | $3\frac{0}{3}$ | - | $30\frac{20}{10}$ | 67 |

**Աղյուսակ 4**

***Լավագույն հարձակվողների ՏՏԳ-ը պաշտոնական հանդիպումներում***

| Խաղա-ցողներ | Փոխանցումներ | | | Վարում | Գլխով խաղ | Գնդակի խլում | Խաբկեր | Խաղից դուրս | Հարվածներ դարպասում | ՏՏԳ ընդհանուր թվաքանակ | Արդյունավետություն % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75-90 րոպե | կարճ | միջին | երկար | | | | | | | | |
| Քեյն | $8\frac{7}{1}$ | $11\frac{10}{1}$ | $6\frac{5}{1}$ | $10\frac{9}{1}$ | - | - | $12\frac{8}{4}$ | - | $2\frac{2}{0}$ | $49\frac{41}{8}$ | 84 |
| Մորատա | $1\frac{1}{0}$ | $4\frac{3}{1}$ | $1\frac{0}{1}$ | $4\frac{4}{0}$ | - | $1\frac{1}{0}$ | $1\frac{0}{1}$ | $1\frac{0}{1}$ | - | $13\frac{9}{4}$ | 48 |
| Մբապե | $2\frac{2}{0}$ | $6\frac{5}{1}$ | $1\frac{0}{1}$ | $6\frac{6}{0}$ | $1\frac{1}{0}$ | - | $6\frac{3}{3}$ | - | - | $22\frac{17}{5}$ | 77 |
| Լևան-դովսկի | $6\frac{6}{0}$ | $13\frac{13}{0}$ | $3\frac{0}{3}$ | $6\frac{6}{0}$ | - | - | $3\frac{3}{0}$ | - | $4\frac{4}{0}$ | $35\frac{32}{3}$ | 91 |
| Հոլանդ | $3\frac{3}{0}$ | $3\frac{3}{0}$ | $2\frac{0}{2}$ | $5\frac{3}{2}$ | $2\frac{2}{0}$ | $1\frac{1}{0}$ | $5\frac{4}{1}$ | - | $1\frac{1}{0}$ | $22\frac{17}{5}$ | 77 |
| Մարտի-նես | $4\frac{3}{1}$ | $6\frac{5}{1}$ | - | $5\frac{4}{1}$ | - | - | $2\frac{2}{0}$ | $2\frac{0}{2}$ | $3\frac{3}{0}$ | $22\frac{17}{5}$ | 77 |

Առաջին երկուսի առավելությունը բացատրվում է նրանով, որ նրանք խաղում են մի քիչ հետ քաշված հարձակվողներ՝ ենթահարձակվողներ: Դրա վկայությունն է նրանց կարճ և միջին փոխանցումների, ինչպես նաև խաբկերի բարձր ցուցանիշները: Այսինքն՝ ելնելով խաղային դիրքից, գնդակն ավելի հաճախակի է լինում նրանց մոտ:

Մորատան էլ, ինչպես Մարտինեսն իր գործողությունների բարձր տոկոսին հասնում է առաջին կեսի վերջի 15 րոպեներին, 82-ից հասցնելով 90%-

ի: Բայց հետագայում ցուցանիշները կտրուկ իջնում են երկրորդ կեսի երեք 15 րոպեների կտրվածքով, համապատասխանաբար՝ 60, 50, 48%: Զգացվում է նրա ցածր ֆունկցիոնալ պատրաստականությունը: Պետք է ասել, որ երկրորդ խաղակեսում բավականին նվազում են նրա ՏՏԳ, միայն խաբկերի ցուցանիշն է իրար մոտ՝ 10 և 9, բայց երկրորդ կեսի նրա 9 խաբկերից 5-ը չի ստացվել: Այս տեսակետից միակ ֆուտբոլիստը Լևանդովսկին է, որի ՏՏԳ-ն ամբողջ խաղի ընթացքում աճում է: Խաղը սկսելով 77% արդյունավետությամբ, յուրաքանչյուր 15 րոպեի կտրվածքով ցույց է տվել արդյունքների աճի դրական դինամիկա՝ 86, 87, 88%: Միայն 60-75 րոպեներին (աղյուսակ 3) այն ընկել է 84%-ի, բայց այն բարձր է առաջին ցուցանիշից, իսկ վերջին 15 րոպեներին (աղյուսակ 4) հասնում է ավելի բարձր ցուցանիշի՝ 91%: Սա վկայում է նրա ՏՏԳ-ի կայուն աճը ամբողջ խաղի ընթացքում:

Ինչպես տեսնում ենք, գրանցված արդյունքներից ֆուտբոլիստները բարձր արդյունավետություն են ցույց տալիս 15-30 րոպեներին (աղյուսակ 2): Հենց այդ ժամանակահատվածում են հիմնականում գրանցվում դարպասի գրավում:

Բայց պետք է նշենք, որ Լևանդովսկին և Մարտինեսն առաջին կեսի վերջին 15 րոպեներին, ի տարբերություն մեր դիտարկված մյուս ֆուտբոլիստների, կարողանում են էլ ավելի բարձրացնել իրենց արդյունավետությունը:

Հետաքրքիր է պատկերը ընդմիջումից հետո, թվում է, թե հանգստից հետո ֆուտբոլիստների ցուցանիշները պետք է ավելի բարձր լինեն, քան առաջին խաղարկեսի վերջնամասում: Բայց միայն Լևանդովսկիի և Մբապեյի մոտ է այդ արդյունքը բարձր (նույնիսկ 15-30 րոպեների հետ համեմատ):

Վերլուծելով 60-75 րոպեների (աղյուսակ 3) արդյունքները՝ տեսնում ենք, որ բոլոր ցուցանիշներն ընկնում են իրենց մինչ այդ եղած լավագույն արդյունքների համեմատ: Բացի Քեյնից մյուսների արդյունքները իջնում են նաև 45-60 րոպեների հետ համեմատ:

Խաղի վերջին 15 րոպեների (աղյուսակ 4) Քեյնի, Մորատայի և Մբապեի մոտ 60-75 րոպեների հետ համեմատ ցուցանիշները նորից ընկնում են, իսկ Լևանդովսկիի մոտ այդ աճը իր ցույց տված արդյունքներից լավագույնն է: Ստացվում է, որ միակ ֆուտբոլիստը Լևանդովսկին է, որը կարողանում է ամբողջ խաղի ընթացքում իր արդյունքը բարձրացնել, և խաղի ավարտին վերջինիս մոտ է գրանցվում ամենաբարձր ցուցանիշները: Իզուր չէ, որ վերջին 15 րոպեներին է գրանցվել ամենաշատ գոլերը:

Սակայն վերոնշյալ երեք ֆուտբոլիստների այս դրական հատկության վրա բացասական ազդեցություն ունեն մեծ թվով սխալ երկար փոխանցումները: Այստեղից երևում է, որ չնայած կայուն ֆունկցիոնալ վիճակին, մի փոքր կաղում է նրանց այդ տեխնիկատակտիկական որակը՝ համեմատած Քեյնի և Մբապեյի: Դրա վկայությունն է նաև Մարտինեսի խաղից դուրս վիճակում հայտնվելու բարձր ցուցանիշը (13), իսկ Քեյնի և Մբապեյի այդ ցուցանիշը 0-է, դա նորից ապացուցում է նրանց տեխնիկատակտիկական բարձր պատրաստվածությունը:

Լևանդովսկու, Հոլանդի և Մարտինեսի վերը նշված բարձր ֆունկցիոնալ պատրաստվածության մասին է վկայում նաև խաղի վերջին 15 րոպեներին (աղյուսակ 4) սխալների ցածր տոկոսը առաջին խաղակեսի 15 րոպեների հետ համեմատ: Օրինակ՝ Քեյնի մոտ այդ պատկերը հակառակն է, եթե առաջին 15 րոպեներին այն կազմում է 12%, երկրորդում բարելավվում և դառնում է 5%, դրանից հետո սկսվում է աստիճանաբար վատանալ, և խաղի վերջում հասնում է 16%-ի: Իսկ Մբապեյի մոտ անընդհատ տատանվում է, մեկ բարձր է սխալների տոկոսը, մեկ ցածր: Դրա պատճառներից է նաև այն, որ այս երկու ֆուտբոլիստները, ինչպես վերը նշվեց, խաղում են որպես ենթահարձակվողներ, և նրանց աշխատանքի ծավալը շատ մեծ է: Բարձր է նրանց ՏՏԳ-ի ընդհանուր քանակը, Քեյնինը՝ 388, իսկ Մբապեինը՝ 239: Եվ բնական է, որ խաղի վերջում զգացնել է տալիս հոգնածությունը, որը, ըստ մեզ՝ գալիս է նաև խաղերի բարձր լարվածությունից:

Ինչպես նշված է Լևանդովսկու, Հոլանդի և Մարտինեսի մոտ, խաղի վերջին հատվածում սխալների տոկոսը ավելի է պակասում է, քան առաջին 15 րոպեներին (աղյուսակ 1), սակայն սրանց մեջ էլ կա մի փաստ, որ խոսում է Լևանդովսկու օգտին: Եթե Հոլանդի և Մարտինեսի մոտ խաղի 15-75 րոպեների տոկոսային ցուցանիշը բարձրանում է և կտրուկ ընկնում խաղի վերջին հատվածում, ապա Լևանդովսկու մոտ խաղի առաջին 15 րոպեներին ցույց տված ցուցանիշը սկսում է բարելավվել մինչև խաղի վերջը:

**Եզրակացություն:** Վերլուծելով դիտարկումների արդյունքները՝ պարզ դարձավ.

ա) չնայած բարձր տեխնիկային, ոչ բոլոր հարձակվողներն են աչքի ընկնում ֆունկցիոնալ բարձր պատրաստականությամբ,

բ) առանձնանում են այն հարձակվողները, որոնք ստեղծում են խորություն մրցակցի կիսադաշտում,

գ) հարձակվողները կայունությամբ աչքի են ընկնում առաջին խաղակեսի միջնամասում 15-30 րոպե,

դ) ոչ բոլոր ֆուտբոլիստներն են մինչև խաղավարտ պահում խաղի բարձր տեմպը,

ե) արդյունավետ են տեխնիկական հնարքները բարձր արագությամբ կատարող ֆուտբոլիստները:

**Առաջարկություն:**

-տեխնիկայի հետ միաժամանակ ավելացնել ֆունկցիոնալ պատրաստության ծավալը և լարվածությունը.

- մեծ ուշադրություն դարձնել արագային տեխնիկային.

- մարզումներում հաճախ օգտագործել 1x1; 2x2; 3x3 դեմ խաղեր:

## 🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հակոբյան Ս., Չատինյան Ա., Ֆուտբոլ, Դասագիրք, Երևան, 2004, 83 էջ:
2. Տիգրանյան Ս., Ֆուտբոլիստների տակտիկական պատրաստությունը, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010, 65 էջ:
3. Аркадьев Б. А., Сборник, М., ФиС, 1990. – С. 98.
4. Качалин Г., Д., Тактика футбола, М., ФиС, 1986. – С. 56-57.
5. Кузнецов А.А., Футбол, Настольная книга детского тренера, Олимрия-Человек М., 2008. – С. 138.
6. Костюкевич В. М., Тактические модели соревновательной деятельности в футболе, Аннотация, Наука в олимпийском спорте .2017- С.40.
7. Костюкевич В.М., Врублевский Е.П., Модели твктики игры в футболе, Монография, «СПОРТ», М., 2020.- С. 95.
8. Пащенко А.Ю., Техникотактическая подготовка футбалистов, Учебно-методическое пособие, Нижневартовск, 2016.-С.-37.
9. Савин С., Футболист в игре и тренеровке,ФиС, М., 1975.- С. 25.
10. Хеддерготт К – Х., Новая футбольная школа, М., ФиС, 1976. – С. 214.

# ANALYSIS OF TECHNICAL AND TACTICAL ACTIONS OF HIGH-LEVEL FOOTBALL ATTACKERS

*V. M. Shmavonyan,*
*Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia*

## ABSTRACT

**Key words:** forward, technique, tactics, action, time, result, efficiency, minute.

**Research relevance:** In the global football, experts develop new methods and means aimed at a positive completion of attacking actions. That is why we considered it necessary to study the technical and tactical actions in detail to ensure maximum results.

**Research aim:** the review of the technical and tactical actions of high-level attacking football players in competitive matches.

**Research methods and organization:** study of primary sources, pedagogical observations, mathematical statistics.

A map of pedagogical observations was developed, covering technical and tactical actions for different periods of football match times.

We studied the technical and tactical actions (TTA) of forwards in 24 official matches of the 2024-2025 season: H. Kane "Bayern", L. Martinez "Inter", A. Holland "Manchester City", A. Morata "Milan", R. Lewandowski "Barcelona" and K. Mbappe "Real".

**Research result analysis:** Harry Kane stands out for his best sides. He is very active in the first half, especially for 15-30 minutes (table 2). He starts the game with 88% TTA efficiency, and in the above minutes it reaches 95%. Mbappe and Holland show the same result. The first one starts the game with 75.5% efficiency and reaches 83%, and the second one starts with 64.5 and reaches 90. Martinez starts with 69% efficiency, and the highest percentage - 87, is shows in the last 15 minutes of the first half. In addition to Holland, the other three also stand out for their high overall TTA. The advantage of Kane and Mbappe is explained by the fact that they play in the positions of slightly detached forwards - sub-forwards. This is evidenced by their high level of short and medium passes, as well as dribbling.

**Conclusion:** a) despite their high technique, not all forwards are highly functional;

b) those forwards stand out who create depth in the opponent's half of the field;

c) forwards are stable in the middle 15-30 minutes of the first half.

# АНАЛИЗ ТЕХНИКО-ТАКТИЧЕСКИХ ДЕЙСТВИЙ НАПАДАЮЩИХ ФУТБОЛИСТОВ ВЫСОКОГО УРОВНЯ

*В. М. Шмавонян,*
*Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения*

## АННОТАЦИЯ

**Ключевые слова:** нападающий, техника, тактика, действие, тайм, результат, эффективность, минута.

**Актуальность исследования**: в мировом футболе специалисты разрабатывают новые способы и средства, направленные на позитивное завершение атакующих действий. Именно поэтому мы посчитали необходимым детально изучить технико-тактические действия для обеспечения максимального результата.

**Цель исследования:** изучение технико-тактических действий нападающих высокого уровня в соревновательных матчах.

**Методы и организация исследования.** Методы исследования: изучение первоисточников, педагогические наблюдения, математическая статистика.

Разработана карта педагогических наблюдений, охватывающая технико-тактические действия по разным периодам таймов.

Мы изучили технико-тактические действия (ТТД) нападающих в 24 официальных матчах сезона 2024-2025: Х. Кейн «Бавария», Л. Мартинес «Интер», Э. Холланд «Манчестер Сити», А. Мората «Милан», Р. Левандовски «Барселона» и К. Мбаппе «Реале».

**Анализ результатов исследования.** Гарри Кейн выделяется своими лучшими сторонами. Он очень активен в первом тайме, особенно в течение 15–30 минут (таблица 2) . Он начинает игру с эффективностью ТТД 88%, а в указанные выше минуты она достигает 95%. Такой же результат показывают Мбаппе и Холланд. Первый начинает игру с КПД 75,5% и достигает 83%, а второй начинает с 64,5 и достигает 90. Мартинес начинает с КПД 69%, а самый высокий процент — 87, показывает в последние 15 минут первого тайма. Помимо Холанда, остальные трое также выделяются высоким общим показателем ТТД. Преимущество Кейн и Мбаппе объясняется тем, что они играют на позициях слегка отстраненных нападающих - поднападающих. Об этом свидетельствует их высокий уровень коротких и средних передач, а также обводок.

**Краткие выводы.**

а) несмотря на высокую технику, не все нападающие отличаются высокой функциональной готовностью,

б) выделяются те нападающие, которые создают глубину на половине поля соперника,

в) нападающие отличаются стабильностью в середине 15-30 минут первого тайма.

***Տեղեկություններ հեղինակի մասին***

Վահան Մելիքսեթի Շմավոնյան՝ Ֆուտբոլի ամբիոնի ասիստենտ,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail:vahan.shmavonyan@sportedu.am

***Information about the author***

Vahan Meliqset Shmavonyan, Assistant of the Football Department,
Armenian State Institute of Physical Culture and Sport,Yerevan, Armenia,
E.mail:vahan.shmavonyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 06.08.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 07.08.2025–ին:

Գրախոս՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Աբովյան